ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԴԱՍՎԱՐ

Թեմա- <<ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ>>

Կազմեց՝ Ռուզաննա Գևորգյան Սամվելի

(անուն, ազգանուն, հայրանուն)

Մեղրու թիվ 1 միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

<<Կապանի N 2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

ԳԼՈՒԽ 1.ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

1.1. Խրախուսանքը՝ որպես վարքի և գործունեության խթանման մեթոդ-------5

1.2.Խրախուսանքի կիրառումը կրտսեր դպրոցական տարիքում----------9

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1. Սոցիոլոգիական հարցումների վերլուծություն ----------12

2.2. Ուսումնական և արտաուսումնական գործընթացում խրախուսանքի մեթոդի կիրառման նկարագրություն ----------20 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------21

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ----------23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը

Մանկավարժական գործընթացում արդիական է այնպիսի մեթոդների, միջոցների կիրառումը, որոնք նպատակաուղղված են անձի վրա դաստիարակչական ներգործությանը: Երեխայի կարգապահ, պատասխանատու վարքագիծ ձևավորելու համար կարևոր է խրախուսանքի կիրառումը, որը վարքի ու գործունեության դրական գնահատման արտահայտությունն է,շտկման, վարքի կարգավորման, ընդունակությունների դրսևորման խթան: Որոշակի իմաստով դա ուսումնական դժվարությունների հաղթահարման և սոցիալական միջավայրում երեխայի արդյունավետ հարմարման ուղղությամբ մանկավարժական ջանքերի գնահատողական արտահայտությունն է, քանի որ մանկավարժական գործընթացի հաջողությունը հաճախ կախված է երեխայի գործունեության խթանման արդյունավետությունից:

Ուսումնական գործունեության մեջ խրախուսանքը և գնահատումը կարևոր են, որոնց ընթացքում ուսուցիչն աշակերտին ոչ միայն գնահատում է, այլև մեկնաբանում է, հիմնավորում այն, ինչը երեխայի աշխատանքում լավ է, նշում առաջադիմության շարժընթացը՝ շեշտադրելով դրականը, բացասականը, ուղղորդում, թե ինչը պետք է շտկի կամ հետագայում զարգացնի:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխան չափազանց զգայուն է խրախուսանքի նկատմամբ: Մեծահասակի գովեստը, հավանություն արտահայտող խոսքերը, դիմախաղը, ժեստերը ինքնահաստատման, ինքնագնահատման, դրական արարքների,ուսումնական դրդապատճառների, սեփական հնարավորությունների դրսևորման, ինքնարտահայտմանմիջոց են: Մանկավարժորեն ճիշտ, տեղին կիրառված խրախուսանքը վստահություն է ներշնչում, մեծացնում պատասխանատվությունը, հավատն իր ուժերի նկատմամբ՝ նրա մեջ ձևավորելով կարգապահություն, պատրաստակամություն, հուզական հավասարակշռություն, աշխատանքն ավելի լավ կատարելու ձգտում:Մանկավարժական ներգործությունը, հատկապես խրախուսանքն առաջնային է երեխայի սոցիալական վարքի,

շրջապատի նկատմամբ վերաբերմունքի, իրադարձությունների հանդեպ նրա դրսևորումներում:

Չնայած այն բանի, որ բազմաթիվ մանկավարժներ են անդրադարձել այս խնդրին, այնուհանդերձ մանկավարժական տեսության մեջ չկա բավականաչափ հստակ մեկնաբանում տարրական դպրոցի ուսումնական և արտաուսումնական գործունեության ընթացքում երեխայի խրախուսանքի կիրառման ձևերի ու միջոցների,ինչպես նաև սոցիալ-մանկավարժական առանձնահատկությունների մասին:

Հետազոտական աշխատանքի նպատակը տարրական դպրոցում խրախուսանքի կիրառման սոցիալ-մանկավարժական առանձնահատկությունների բացահայտումն ու այդ ուղղությամբ աշխատանքների նկարագրությունն է:

Հետազոտական աշխատանքի ընթացքում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1.ուսումնասիրել և վերլուծել հետազոտական աշխատանքի թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականություն,

2.բնութագրել կրտսեր դպրոցական տարիքում խրախուսանքի կիրառման նշանակությունն ու սոցիալ-մանկավարժական առանձնահատկությունները,

3. նկարագրել ուսումնական և արտաուսումնական գործընթացում խրախուսանքի կիրառման օրինակներ,

4.ուսուցիչների, ծնողների և աշակերտների շրջանում անցկացնել հարցումներ, վերլուծել արդյունքները:

Հետազոտական աշխատանքի կիրառական նշանակությունն այն է, որ կատարված ուսումնասիրությունը, մեթոդական նյութերն ու հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել տարրական դպրոցում կրտսեր դպրոցականների խրախուսանքի ընթացքում:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքն ու ծավալը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից :

ԳԼՈՒԽ 1. ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

1.1. Խրախուսանքը՝ որպես վարքի և գործունեության խթանման մեթոդ

Խրախուսանքը աշակերտի, կոլեկտիվի խմբային կամ անհատական գործունեության, արարքների, վարքային դրսևորումների դրական գնահատումն է, հավանություն տալը, հասարակայնորեն արժեքավոր լինելը: Խրախուսել նշանակում է մղել դրական արարքների, ընդունել արարքի կամ վարքի ընդունելի լինելը, մարդու արարքների հասարակական արժեքավորությունը, դրականորեն գնահատել որևէ անհատի կամ կոլեկտիվի գործունեությունը, մարդու մեջ բարձր ինքնագնահատական ձևավորել, ամրապնդել սանի հավատը իր ուժերի նկատմամբ և խթանել նրա արժեքավոր գործունեությունը: Խրախուսանքը մարդու վարքագծի և արարքների դրական գնահատման ձև է: Նրա հիմնական գործառույթը դրական վարքագիծը խթանելը, նրան ինքնավստահություն ներշնչելը և ավելի լավ արարքների մղելն է:

Խրախուսումը սաների գործողությունների դրական գնահատականն արտահայտելու մանկավարժական մեթոդ է և բաղկացած է դրական հմտությունների և սովորությունների համախմբումից: Խրախուսումը ներառում է դրական հույզերի գրգռում, վստահություն է ներշնչում, հաճելի տրամադրություն է ստեղծում, մեծացնում պատասխանատվությունը:

Հավանությունը խրախուսանքի ամենապարզ տեսակն է, որը ուսուցիչը կարող է արտահայտել ժեստով, դեմքի արտահայտություններով, աշակերտի կամ թիմի վարքագծի կամ աշխատանքի դրական գնահատմամբ, երեխաների, ուսուցիչների կամ ծնողների առջև խրախուսանքով: Ավելի բարձր մակարդակի խրախուսումները՝ շնորհակալություն, մրցանակներ և այլն, կայուն դրական հույզեր են առաջացնում և աշակերտին կամ թիմին երկարաժամկետ խթաններ են տալիս նոր, ավելի բարձր մակարդակի հասնելու համար: Հանդիսավոր պարգևատրումը հասակակիցների, ուսուցիչների, ծնողների ներկայությամբ ուժեղացնում է խթանման հուզական կողմը և դրա հետ կապված փորձառությունները:

«Խրախուսման մեթոդը պահանջում է զգույշ չափաքանակ և որոշակի զգուշություն: Ավելորդ խրախուսումը կարող է ոչ միայն օգուտներ բերել, այլև վնաս հասցնել կրթությանը: Առաջին հերթին պետք է հաշվի առնել խրախուսման հոգեբանական կողմը և դրա հետևանքները» :

Մանկավարժական գործընթացում խրախուսման ներգործությունը բացատրվում է հետևյալ հանգամանքներով.

- ցույց է տալիս գործողությունների, արարքների, վարքի՝ հանրության կողմից ընդունելի լինելը.
- առաջացնում է բավարարվածության, գոհունակության զգացում,
- ընդգծում է անհատականությունը, բարձրացնում է անձի տրամադրությունը, օժտում է դրական էներգիայով, նպաստում է վստահության, նախաձեռնողականության կարողությունների ձևավորմանը, ինքնուրույնությանը, ակտիվությանը, դրական դրդապատճառներին,
- առաջացնում է դրական հույզեր՝ ուրախություն, հպարտություն, ցանկություն, նպատակադրվածություն, հավատ ուժերի նկատմամբ, ամրապնդում է առողջությունը, կոփում է կամքը,
- բարելավում է միջանձնային հարաբերությունները, թիմում բարենպաստ մթնոլորտ է ստեղծում, մղում է համագործակցության, հաղորդակցման և այլն:

Չի կարելի խրախուսանքը շռայլել: Այս դեպքում ոչ մի նշանակություն չպետք է ունենան «սիրելի», «ոչ սիրելի» աշակերտները, այլ պետք է նկատի ունենալ հասարակայնորեն կարևոր նշանակությունը:

Վատ է, երբ աշակերտն իր կատարած աշխատանքի համար սպասում է պարգևի, գովասանքի: Ընդառաջ գնալ նմանին առնվազն կնշանակի նրա մեջ արմատավորել բնավորության վատ գիծ, վատ սովորույթ , որը կարող է նրան ուղեկցել ամբողջ կյանքում :

Խրախուսմանը նախ և առաջ պետք է արժանանալ: Մանկավարժորեն նպատակահարմար է երեխայի ֆիզիկական և բարոյական ջանքերով վաստակած խրախուսանքը, որն աշակերտն ընկալում է որպես աշխատանքի վարձատրություն, առաջացնում է բավարարվածություն և կատարելության ձգտում:Բավականաչափ հմտություն է պահանջում ճիշտ և նպատակաուղղված խրախուսանքը: Ըստ

արժանվույն արված խրախուսանքն ընկալվում է ոչ միայն խրախուսվողի, այլև նրա շրջապատի կողմից՝ առաջացնելով նրանց հիացմունքը, հպարտությունը, ընդօրինակման, նրան նմանվելու ցանկությունը, երբեմն նույնիսկ նախանձը։ «Հաճախ է պատահում, որ ընտանիքում երեխաներին անհարկի գովաբանում են, տալիս են բարձր գնահատական, իսկ դպրոցում նրանց տրված իրական գնահատականը չի համապատասխանում ընտանիքներում ձևավորված ինքնագնահատականին։ Այս հակասությունը կարող է խնդիրներ առաջացնել երեխայի կյանքում և անբարեհարմարություն նրա հոգեկան աշխարհում։ Տարրական դպրոցի ուսուցչի գերխնդիրը պետք է լինի խորությամբ ճանաչել իր աշակերտներին ապա նոր գնահատել նրա գործունեությունը» :

Ժամանակակից դպրոցում կիրառվում են խրախուսանքի տարբեր ձևեր՝ դաստիարակի գովասանքը, բանավոր, գրավոր շնորհակալությունը, շնորհակալությունը դպրոցի մասշտաբով, գրենական պիտույքներով, դասագրքերով պարգևատրումը, պատվո տախտակին արժանացնելը և այլն :

Խրախուսանքի մեթոդը կիրառելիս պետք է հաշվի առնել մանկավարժական հետևյալ պայմանները.

1. Աշակերտի վարքագիծը պետք է դրդված լինի ոչ թե գովասանքի կամ պարգևատրման ցանկությամբ, այլ ներքին համոզմունքներով, բարոյական դրդապատճառներով:

2. Խրախուսմանը արժանի են ոչ միայն նրանց, որոնք հասել են հաջողության, այլ նաև նրանց, որոնք բարեխղճորեն աշխատել են ընդհանուր բարօրության համար, ցույց են տվել ազնիվ վերաբերմունքի օրինակ։ Պետք է խրախուսել նրանց, որոնք ցուցաբերել են աշխատասիրություն, պատասխանատվություն և օգնել են ուրիշներին, նույնիսկ եթե նրանք չեն հասել անձնական ակնառու հաջողությունների:

3. Խրախուսումը պետք է սկսվի հարցերի պատասխաններից՝ ում, ինչքան և ինչի համար, և պետք է համապատասխանի աշակերտի արժանիքներին, նրա անհատական հատկանիշներին և կոլեկտիվում ունեցած վարկանիշին։ Կարևոր է գտնել աշակերտին խրախուսելու համար բնորոշ չափանիշ։ Անչափ գովասանքը բերում է ամբարտավանության։ Խրախուսելիս պետք է հաշվի առել նաև դասընկերների կարծիքն ու հետագա հնարավոր վերաբերմունքը։

Այսպիսով՝ որպես խրախուսանքի կիրառման ***սոցիալական*** առանձնահատկություններ կարելի է առանձնացնել հետևյալը.

- խրախուսանքը սոցիալական տարբեր խմբերում երեխայի վարքի և գործունեության խթանիչ ու կարգավորիչ է,
- ճիշտ, նպատակաուղղված խրախուսանքը նպաստում է սոցիալական միջավայրում երեխայի ինքնադրսևորմանը, ձևավորում է ոչ միայն շրջապատի վերաբերմունքը երեխայի նկատմամբ, այլև նրա վերաբերմունքը շրջապատի նկատմամբ,
- պետք է հաշվի առնել խրախուսանքի հնարավոր ազդեցությունը սոցիալական վրա, քանի որ դա կարող է հասակակիցների կողմից երեխայի նկատմամբ բացասական վերաբերմունք, նույնիսկ թշնամանք ձևավորել,
- առանձին վերցված երեխայի խրախուսանքը պետք է ընդունված լինի աշակերտական կոլեկտիվի կողմից, հակառակ դեպքում այն անարժեք և անարդյունավետ կլինի,
- խրախուսանքը նպաստում է միջանձնային փոխհարաբերությունների ձևավորմանը. գնահատված լինելով շրջապատում՝ երեխան փորձում է այդ միջավայրում առավել լավ դրսևորվել, լավ օրինակ լինել՝ դրանով իսկ մյուսներին ևս մղելով օրինակելի վարքի և գործունեության։

Խրախուսանքի կիրառման ***մանկավարժական*** առանձնահատկություններ են.

- խրախուսանքն արդյունավետ է, եթե հասկանալի է երեխային, և նա խորապես համոզված է, որ այն արդարացի է,
- խրախուսանքի ձևն ընտրելիս հարկ է հաշվի առնել, որ այն երեխայի համար հիմնավորված և ընդունելի լինի, քանի որ անտեղի, մանկավարժորեն ոչ համարժեք խրախուսանքը կարող է նաև բացասաբար անդրադառնալ երեխայի հոգեվիճակի վրա,
- խրախուսանքի կիրառումը պահանջում է մանկավարժական տակտ. հնարավոր է, որ խրախուսանքը ձայնի այնպիսի տոնով, ժեստերով, միմիկայով արտահայտվի, որ չունենա մանկավարժական արդյունավետություն,
- մանկավարժը պետք է տիրապետի մանկավարժահոգեբանական գիտելիքների, խրախուսանքի ձևն ու միջոցն ընտրելիս պետք է հաշվի առնել

երեխայի տարիքային առանձնահատկությունները, նախասիրությունները, բնավորությունը, խառնվածքը, այն, թե նրան ինչն է հետաքրքիր ու մոտիվացնող,

- մանկավարժորեն ճիշտ է խրախուսել նույնիսկ ամենահամեստ ձեռքբերումները, եթե դա երեխային տրվել է ուժերի մեծ լարումով,
- խրախուսանքը չպետք է չարաշահել. պետք է այնպես խրախուսել, որպեսզի երեխան գնահատի խրախուսման փաստը, այլ ոչ թե պարգևը:

1.2.Խրախուսանքի կիրառումը կրտսեր դպրոցական տարիքում

Երեխայի խրախուսման գործում գլխավոր դերում են երեխայի ընտանիքը, այն մարդիկ, որոնք շրջապատում են փոքրիկին: Եթե ծնողները հետևողականորեն զբաղվում են իրենց երեխաներով, ուշադիր և հոգատար են, աջակցում և խրախուսում են փոքրիկին՝ սովորեցնելով լուծել ցանկացած խնդիր, ապա երեխան կմեծանա բարձր ինքնագնահատականով, իր ուժերին վստահ:

6-10 տարեկան հասակը լավագույն տարիքն է երեխայի դրական հատկանիշները խթանելու, խրախուսանքի միջոցով նրա մեջ ցանկալի հատկանիշներ ձևավորելու առումով: Երեխայի համար շատ կարևոր է հենց այս տարիքում ընդունված լինել շրջապատում, իր արարքներին համարժեք գնահատված լինել:

Մանկության տարիներին խրախուսանքի չարժանանալը դեռահասության և պատանեկան տարիքում կարող են բարդույթներ, չհասկացված լինելու զգացում ձևավորել: Ճիշտ խրախուսանքը երեխայի մեջ իր անձի նկատմամբ հարգանք, ինքնավստահություն է ձևավորում: Եթե երեխայի մեջ դեռ մանկուց կարողանանք սերմանել բարձր ինքնագնահատական և հարգանք սեփական անձի նկատմամբ: Այստեղից կարելի է եզրահանգել, որ կրտսեր դպրոցական տարիքում երեխաները աստիճանաբար ընկալում են խրախուսանքի իմաստը և գիտակցում իրենց հնարավորությունները որոշակի աշխատանքների կատարման համար:

Երեխայի տարիքային զարգացման յուրաքանչյուր առանձնահատկություն պետք է ուշադիր ուսումնասիրվի և հաշվի առնվի ոչ միայն տվյալ պահին, այլև երեխայի հետագա ամբողջ կյանքում, հատկապես տարիքային կենսափուլերի

անցման շրջանում: «Կրտսեր դպրոցականի համար շատ կարևոր է, որ որ նրան ասեն՝ դու լավն ես, ուսուցիչը ժպտա և շոյի նրան: Դեռահասի համար հասակակիցների կարծիքը ձեռք է բերում կարևոր նշանակություն: Դեռահասը կարող է հրաժարվել մեծերի ցանկացած խրախուսանքից, եթե այն չի արժանացել հասակակիցների հավանությանը: Ավագ դպրոցականը, պատանին կամ երիտասարդը խրախուսանքը գնահատում են իրենց ապագայի, հասարակական վարքի սոցիալական և հոգեբանական տեսանկյուններից» [Ղույումչյան Գ.Ե.,Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք 2.- Եր., Զանգակ, 2005.-232 էջ, էջ 187-188]:Որպեսզի իր սանին ավելի լավ ճանաչի, հասկանա և խրախուսի, ուսուցիչը պետք է իմանա նրա տարիքային տվյալ փուլին բնորոշ կազմաբնախոսական, նյարդահոգեբանական առանձնահատկությունները, ուսումնասիրի նրա զարգացման ընթացքը, պարզի իր սաների միջև եղած տարբերությունները, յուրաքանչյուր երեխայի յուրովի մոտեցում ցուցաբերի, որպեսզի բացահայտի իր աշակերտների հասունացման ընթացքի հնարավոր արգելքները:

Տարրական դպրոցում արդեն երեխաները սկսում են ինքնահաստատվել, ցույց տալ՝ ինչի են ունակ, ուշադրության կենտրոնում լինել, խրախուսանքի արժանանալ, խմբում առանձնանալ: Երեխաներն սկսում են կարևորել ուսուցիչների ու դասընկերների վերաբերմունքն իրենց նկատմամբ, ակնկալում են դրական վերաբերմունք, գնահատողական խոսք:«Երբեմն անվստահ լինելով իրենց հնարավորությունների նկատմամբ՝ երեխաները շատ զգայուն են, թե ինչ հավանության են արժանանում,ինչը բարձրացնում է նրանց ինքնագնահատականը իրենց իսկ աչքերում»[Լիպկինա Ա. Ի., Դպրոցականի ինքնագնահատումը, -Եր.: Լույս, 1977. -96 էջ, էջ 3-24]:

Կարևոր դեր են խաղում սոցիալական դրդապատճառները, որոնք ի հայտ են գալիս 2-3-րդ դասարաններում: Աշակերտի համար կարևորվում են ուսուցչի գովասանքը, գնահատականը, ավելի ուշ՝ հասակակիցների կարծիքը իր անձի վերաբերյալ: Կրտսեր դպրոցականը դժվար է կենտրոնանում որևէ աշխատանքում, նրա համար խթան է մեծահասակի, ծնողի, ուսուցչի խրախուսական խոսքը,որը դրական դրդապատճառ է դառնում: Սակայն լինում են դեպքեր, երբ ուսուցիչը կամ

ծնողը բարկանում, հանդիմանում են երեխային, և նրա մեջ ի հայտէ գալիս անինքնավստահություն սեփական ուժերի նկատմամբ: Կրտսեր դպրոցական տարիքի երեխաները, երբ մի նոր բան են սովորում կամ անում, ցանկանում են, որ իրենց խրախուսեն, գովաբանեն: Երբ մեծահասակները թերագնահատում են երեխաների կարողությունները, ապա աննշան թվացող աննրբանկատությունը բերում է վատ հետևանքներ. երեխաները պարփակվում են, չեն շփվում շրջապատում: Այս առումով Գ. Ղույումչյանը գրում է. «Եթե այս տարիքում երեխան անհաջողակ լինի, չզգա իմացության բերկրանքը, ձեռք չբերի սովորելու ունակություն, չսովորի բարեկամանալ, ձեռք չբերի վստահություն իր ընդունակությունների և հնարավորությունների նկատմամբ, հետագայում (սենզիտիվ շրջանի հնարավորություններից դուրս) այդ ամենի ձեռքբերումը կլինի շատ դժվար և կպահանջի անհամեմատ մեծ հոգեկան և ֆիզիկական ուժեր» [Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար:Երկու գրքով: Գիրք 1.- Եր.: Զանգակ-97,2005.- 464 էջ, էջ 157]:

Կրտսեր դպրոցականների խրախուսման վերաբերյալ հետազոտական և գործնական աշխատանքների նկարագրությանը կանդրադառնանք հաջորդ գլխում:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1. Սոցիոլոգիական հարցումների վերլուծություն

Հետազոտական աշխատանքի թեմայի վերաբերյալ հարցաթերթիկային հարցումներ են անցկացվել Սյունիքի մարզի դպրոցների 40 դասվարների շրջանում :

Ուսուցիչների շրջանում անցկացված հարցման արդյունքներ.

1. Խրախուսանքը հիմնականում արտահայտում եք՝



Տրամագիր 1

Մենք պարզեցինք, որ ուսուցիչները խրախուսանքը արտահայտում են խոսքային միջոցներով, գովեստով:

2. Ձեր կարծիքով՝ խրախուսանքի մեթոդի կիրառման համար մանկավարժական տակտը անհրաժե՞շտ է



Տրամագիր 2

Դրական է այն, որ ուսուցիչների մեծ մասը կարևոր է համարում մանկավարժական տակտը:

3. Խրախուսանքի մեթոդ կիրառելիս հաշվի առնու՞մ եք արդյոք աշակերտի տարիքային, անհատական-հոգեբանական հատկանիշները, հուզական հակազդումները՝



Տրամագիր 3

Դրական է այն, որ ուսուցիչների 90%-ը հաշվի է առնում տարիքային, անհատական-հոգեբանական հատկանիշները, հուզական հակազդումները:

4. Խրախուսանք կիրառելիս հաշվի առնու՞մ եք արդյոք դասարանում պարապող մյուս ուսուցիչների կարծիքը՝



Տրամագիր 4

Մեզ մտահոգեց այն, որ ուսուցիչների 43% հաշվի չի առնում դասարանում պարապող մյուս ուսուցիչների կարծիքը:

5. Գնահատականը կիրառու՞մ եք որպես խրախուսանքի միջոց՝



Տրամագիր 5

Մեզ հետաքրքրեց այն, որ ուսուցիչների մեծամասնությունը գնահատականը երբեմն կիրառում է որպես խրախուսանքի միջոց:

6. Ձեր կարծիքով՝ որևէ աշակերտին խրախուսելուց հետո աշակերտական կոլեկտիվում ի՞նչ վերաբերմունք է ձևավորվում նրա նկատմամբ՝



Տրամագիր 6

Պարզվեց որ մեծամասնության կարծիքով կոլեկտիվում մրցակցություն է ձևավորվում և դրական տվյալ է այն, որ բացասական հարաբերություններ չի նշվել:

7. Ձեր պրակտիկայում առավելապես կիրառվել են խրախուսանքի հետևյալ ձևերը՝



Տրամագիր 7

Մենք պարզեցինք, որ ուսուցիչների մեծ մասը որպես խրախուսման ձև կիրառում են գովասանագիրը:

Ուսուցիչների շրջանում անցկացված հարցումների արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել՝

- խրախուսանքը հիմնականում արտահայտում են խոսքային միջոցներով, գովեստով,
- հարցված ուսուցիչների մեծամասնությունը կարևորում են աշակերտի տարիքային, անհատական-հոգեբանական հատկանիշները, հուզական հակազդումները,
- հարցված ուսուցիչների մեծամասնությունը կարևորում են գնահատանիշը որպես խրախուսանքի միջոց,
- խրախուսանքը առավել նպատակահարմար է կիրառել ուսումնական դրդապատճառների ձևավորման համար,
- հարցվածների մեծամասնությունը կիրառել են գովասանքը, որպես խրախուսանքի ձև,
- հարցվածների մեծամասնությունը անհրաժեշտ են համարում մանկավարժական տակտը՝ խրախուսանքի մեթոդի կիրառման համար:

Ավարտական աշխատանքի թեմայի վերաբերյալ հարցաթերթիկային հարցումներ են անցկացվել Երևանի Գագիկ Ստեփանյանի անվան թիվ 135, Ջ. Կիրակոսյանի անվան թիվ 20, Սյունիքի մարզի Ագարակի Եղիշե Չարենցի անվան հիմնական դպրոցների, ինչպես նաև օնլայն հարթակում 2-4-րդ դասարանների 46 ծնողների շրջանում:

Ծնողների շրջանում իրականացված հարցման արդյունքները.

1. Ակնկալու՞մ եք արդյոք, որ Ձեր երեխայի դրական արարքն անպայման պետք է խրախուսվի դպրոցում՝



Տրամագիր 1

Պարզվեց, որ ծնողների մեծամասնությունը ակնկալում է, որ իրենց երեխայի դրական արարքն անպայման պետք է խրախուսվի դպրոցում:

2. Երբ երեխան չի ստանում իր ակնկալած խրախուսանքը, ի՞նչ երևույթներ եք նկատում նրա վարքում՝



Տրամագիր 2

Պարզվեց, որ խրախուսանք չստանալիս երեխաները կամ նյարդայնանում, բողոքում են կամ անտարբեր են:

3. Ձեր երեխան առավել ոգևորվում է՝



Տրամագիր 3

Մենք պարզեցինք, որ երեխան առավել ոգևորվում է, երբ բարոյական խրախուսանք է ստանում:

4. Ընտանիքում խրախուսանք կիրառելիս խորհրդակցում կամ համագործակցու՞մ եք ուսուցչի հետ՝



Տրամագիր 4

Մեզ մտահոգեց այն, որ ծնողների մեծամասնությունը չի համագործակցում կամ խորհրդակցում ուսուցչի հետ:

5. Համամի՞տ եք լինում ուսուցչի կողմից կիրառված խրախուսանքի ձևերին ու միջոցներին՝



Տրամագիր 5

Հետաքրքիրն այն է, որ ծնողների մեծամասնությունը միշտ չի որ համամիտ է լինում ուսուցչի կողմից կիրառված խրախուսանքի ձևերին ու միջոցներին:

6. Խրախուսանքի տարբեր ձևեր կիրառելիս երեխայի անհատական-հոգեբանական հատկանիշները հաշվի առնելու առումով ուսուցիչը խորհրդակցու՞մ է արդյոք Ձեզ հետ՝



Տրամագիր 6

Մենք պարզեցինք, որ ծնողները երբեմն խրախուսանքի տարբեր ձևեր կիրառելիս երեխայի անհատական-հոգեբանական հատկանիշները հաշվի առնելու առումով խորհրդակցում են ուսուցչի հետ:

7. Ձեր կարծիքով՝ խրախուսանք կիրառելիս դասվարի և մյուս ուսուցիչների մոտեցումները միանշանա՞կ են՝



Տրամագիր 7

Մենք պարզեցինք, որ ծնողների կարծիքով խրախուսանք կիրառելիս դասվարի և մյուս ուսուցիչների մոտեցումները ոչ միշտ են միանշանակ:

Ծնողների շրջանում անցկացված հարցումների արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել՝

- խրախուսանք կիրառելիս դասվարի և մյուս ուսուցիչների մոտեցումները միանշանակ են,
- հարցված ծնողների մեծամասնությունը ակնկալում է, որ իր երեխայի դրական արարքն անպայման պետք է խրախուսվի դպրոցում,
- երեխան առավել ոգևորվում է բարոյական խրախուսանք ստանալիս,
- հարցվածների մեծամասնությունը երեխաների վարքում նկատում է բողոք, վրդովմունք, նյարդային են լինում, երբ երեխան չի ստանում իր ակնկալած խրախուսանքը,
- հարցված ծնողների մեծամասնությունը համամիտ է ուսուցչի կողմից կիրառված խրախուսանքի ձևերին և միջոցներին:

Ավարտական աշխատանքի թեմայի վերաբերյալ պրակտիկայի ընթացքում հարցազրույց անցկացվեց Երևանի Գագիկ Ստեփանյանի անվան թիվ 135 դպրոցի 3-րդ դասարանի 35 աշակերտների շրջանում: Մինչ հարցազրույցը երեխաների հետ զրուցեցինք խրախուսանքի մասին, օրինակների միջոցով բացատրեցինք բառի նշանակությունը:

Այն հարցին, թե ուրախանում են արդյոք, երբ ամեն լավ արարքի համար խրախուսում են, աշակերտները միահամուռ, մեծ ոգևորությամբ դրական պատասխան տվեցին:

«Երբ ուսուցիչը ձեզ խրախուսում է, ի՞նչ եք զգում» հարցին աշակերտների մեծ մասը պատասխանեց, որ զգում է ուրախություն, ինչպես նաև եղան հետևյալ պատասխանները՝ երջանկություն, ոգևորություն, հպարտություն, որոնք հանպատրաստից էին, և մենք չէինք ակնկալում նման հետաքրքիր պատասխաններ:

«Դու խրախուսու՞մ ես քո ընկերներին լավ արարքի համար» հարցին աշակերտների մեծ մասը ևս դրական պատասխան տվեց, բայց և այնպես աշակերտների մի մասը լռեց նույնիսկ հարցը կրկնելուց հետո:

«Երբ ուսուցիչը քեզ չի խրախուսում, ի՞նչ ես զգում» հարցին աշակերտների մեծ մասը պատասխանեց, որ տխրում է, զգացվեց նաև, որ մի քանի աշակերտ անտարբեր է խրախուսանքի նկատմամբ:

«Երբ նույն արարքի համար ուսուցիչը խրախուսում է բոլորին, իսկ քեզ՝ ոչ, ի՞նչ ես զգում» հարցին աշակերտների մեծ մասը լռեց. նրանց համար թերևս դժվար էր որևէ կարծիք արտահայտել: Երկու աշակերտ միայն ասացին, որ կուզենային՝ բոլորին էլ խրախուսեին լավ արարքի համար:

Այն հարցին, թե որն է իրենց ամենասիրելի խրախուսման ձևը, եղան հետաքրքիր պատասխաններ՝ գովեստ, նվերներ, անակնկալներ բարձր գնահատական:Աշակերտներից մեկն էլ անկեղծացավ, որ իր համար ամենակարևորը ուսուցչի ժպիտն է:

Հարցազրույցի մանկավարժական արդյունավետությունն արտահայտվեց նրանով, որ աշակերտները ոգևորություն դրսևորեցին՝ հաղորդակցվելով, մտածելով և խմբում իրենց կարծիքն արտահայտելով: Ըստ երևույթին

հարցազրույցը շատ դուր եկավ աշակերտներին, նրանք հաճախակի մոտենում էին և խնդրում նմանատիպ հարցերի պատասխանել: Բնականաբար դա ևս խրախուսելի է:

2.2 Ուսումնական և արտաուսումնական գործընթացում խրախուսանքի մեթոդի կիրառման նկարագրություն

Երեխայի ուսումնական դրդապատճառների, գործունեության, արդյունավետ հաղորդակցման, միջավայրում ճիշտ հարաբերություններ ձևավորելու մակարդակը մեծ չափով կախված է խրախուսանքի մեթոդի ճիշտ կիրառումից:Համարժեք խրախուսանքը նպաստում է ընդունակությունների դրսևորմանը,վարքի կարգավորմանը: Ցանկացած գործողության կատարման համար երեխան պետք է գիտակցի, թե ունի արդյոք համապատասխան որակներ, կարողություններ, գնահատի իրականի և ցանկալիի համապատասխանությունը, որն արտահայտվում է խրախուսման մեջ:

Դեռևս վաղ տարիքից համարժեք խրախուսանքն օգնում է սեփական արարքները, գործողությունները ճիշտ գնահատել: Երեխայի դպրոց գնալով՝երեխան ընդգրկվում է դպրոցի կրթամշակութային միջավայր, որտեղ նրա արարքների, վարքագծի վրա որոշիչ նշանակություն են ունենում ուսումնական գործընթացը, կիրառվող մեթոդներն ու միջոցները, արտադասարանային միջոցառումները, դաստիարակչական թեմաներով զրույցները, ուսուցիչների ու դասընկերների հետ հաղորդակցման ու փոխհարաբերությունների բնույթը՝իր անձի հնարավորությունների վերաբերյալ ձևավորելով նոր պատկերացումներ: Երբ երեխայի ուսումնական հաջողությունները, դրական արարքները չեն գնահատվում, խրախուսվում, երեխան կորցնում է վստահությունն իր ուժերի նկատմամբ, վիրավորվում է, դառնում է ագրեսիվ, նեղացկոտ, չշփվող, կամ ընդհակառակը անտարբեր, չհաղորդակցվող:

Խրախուսանքի մեթոդը կիրառվում է տարրական դպրոցի ուսումնական և արտաուսումնական գործընթացում: Պետք է օգտագործել ուսումնական բոլոր առարկաների հնարավորությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Տարրական դպրոցում խրախուսանք կիրառելիս պետք է հաշվի առնել կրտսեր դպրոցականի տարիքային, անհատական առանձնահատկությունները՝ միշտ ուշադրության կենտրոնում լինելը, զգայունակությունը, հուզական արձագանքը, գնահատողական վերաբերմունքի արժանանալու ձգտումը, ընդօրինակումը, մրցակցային լինելը, ինչպես նաև անհատական-հոգեբանական հատկանիշները՝ խառնվածքը, բնավորությունը, նախասիրությունները, հուզակամային որակները։
2. Խրախուսանքի կիրառումն ունի ***սոցիալական*** առանձնահատկություններ՝

- սոցիալական խմբում երեխայի վարքի և գործունեության դրական խթանիչ է, նպաստում է միջավայրում երեխայի ինքնադրսևորմանը, ձևավորում է միջանձնային հարաբերություններ՝ իր վարքով և գործունեությամբ ևս օրինակ դառնալով մյուսների համար,
- պետք է հաշվի առնել տվյալ երեխայի խրախուսանքի հնարավոր ազդեցությունը սոցիալական խմբի վրա՝ նրա նկատմամբ հասակակիցների բացասական վերաբերմունքը բացառելու համար,
- երեխայի խրախուսանքը արդյունավետ կլինի, եթե ընդունված ու հիմնավորված լինի թե՛ իր, թե՛ սոցիալական խմբում. հակառակ դեպքում այն անարժեք և անարդյունավետ կլինի։

3. Խրախուսանքի կիրառման ***մանկավարժական*** առանձնահատկություններ են.

- խրախուսանքը պետք է հիմնավորված, մանկավարժորեն համարժեք և արդարացված լինի, այն չպետք է չարաշահել. երեխան պետք է գնահատի խրախուսման փաստը, այլ ոչ թե պարգևը,
- խրախուսանքի կիրառումը պահանջում է մանկավարժահոգեբանական գիտելիքների իմացություն, մանկավարժական տակտ. խրախուսանքի ձևն ու միջոցն ընտրելիս պետք է հաշվի առնել երեխայի տարիքային-անհատական առանձնահատկությունները, այն, թե նրան ինչն է հետաքրքիր ու մոտիվացնող,

- մանկավարժորեն ճիշտ է խրախուսել նույնիսկ ամենահամեստ ձեռքբերումները, եթե դա երեխային տրվել է ուժերի մեծ լարումով։

4. Խրախուսանքը կիրառվում է տարրական դպրոցի ուսումնական և արտաուսումնական գործընթացում՝ դրական արարքների համար խրախուսանքի արժանանալու վերաբերյալ թեմաների ուսուցման,դասի, արտադասարանային միջոցառումների, խաղերի ընթացքում երեխաների ուսումնական գործունեության, շփումների, վարքի և իմացական գործընթացների խրախուսման, խրախուսանքին նվիրված դասղեկի ժամերի ընթացքում։ Նպատակահարմար են ընտանիքում երեխաների խրախուսման վերաբերյալ ծնողներին իրազեկումը, զրույցն ու խորհրդատվությունը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, - Եր.:Մանկավարժ, 2005, -454 էջ,
2. Ասատրյան Զ.,Տարրական կրթության մանկավարժություն. ուսումնամեթոդական ձեռնարկ /դասախոս. ժողովածու/, -Եր.: Տիգրան Մեծ, 2017.-160 էջ:
3. Գյուլամիրյան Զ. Հ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, - Եր.: Զանգակ-97, 2006, -328 էջ:
4. Էլկոնին Դ.Բ., Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն, - Եր.: «Լույս», 1975:
5. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ. տեսություններ, մեթոդներ, գնահատում, -Եր.: Նոյյան տապան, 2005.-402 էջ:
6. Լիպկինա Ա. Ի., Դպրոցականի ինքնագնահատումը, -Եր.: Լույս, 1977. -96 էջ:
7. Կրտսեր դպրոցականի հոգեբանություն: ՈՒսումնամեթոդական ձեռնարկ Զ.Ե.Թունյան,Լ.Մ.Երիցյան,-Եր.:ԷՆ-ՎԵ ՓՐԻՆԹ,2013.-287էջ:
8. Ղույումչյան Գ.Ե.,Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք 2.- Եր., Զանգակ, 2005.-232 էջ:
9. Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար:Երկու գրքով: Գիրք 1.- Եր.: Զանգակ-97,2005.- 464 էջ
10. Ուսուցչի մասնագիտական գործունեության հիմունքներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ/Կազմեց՝ Գրետա Հակոբյան.-Եր: Արտագերս, 2019.-168 էջ: